ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 Մարտի 2021 թվականի N 57

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N 59-Ա որոշման, Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 4-ի N 10 կարգադրության և հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի մարտի 05-ի ուսումնասիրության ակտը, ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքում 2021 թվականի տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառել սկսած յուրաքանչյուր ամսվա վճարի 50 տոկոսի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09-ը մարտ 2021թ
Ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2021 թվականի
մարտի 9-ի N 57 որոշման

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

Հ/Հ	ԵՐԵԽԱՅԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԿԻՐԱՌՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ %	ԾՆՆԴՅԱՆ ՕՐ, ԱՄԻՍ, ՏԱՐԵԹԻՎ
1	2	3	4
«ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ		
1	Արսինե Առաքելյան	50	10.01.2018

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 Մարտի 2021 թվականի N 58

ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԲԵՆԻԱՄԻՆ ՍԻՄՈՆԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-հոդվածի 1- ին մասին 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի, 40- րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում զոհված ժամկետային զինծառայող Բենիամին Սիմոնի Աղաջանյանի հուղարկավորության ծախսերը հոգալու համար տրամադրել համայնքի բյուջեի գործառական դասակարգման 10.7.1 <Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4726 <Հուղարկավորության նպաստներ բյուջեից> հոդվածից 250000 դրամ և 01.06.1 <Հանրային ծառայություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4269 < Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածից 68000 դրամ:

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանին՝ ապահովել ֆինանսավորումը և կատարել վճարումը:

3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ա. Սմբատյանի վրա:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2021թվականի N 59

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 22 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4- ի N526 -Ն որոշման 4- րդ գլխի 16- րդ կետի պահանջների **որոշում եմ.**

1. Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 02- ի <<2021 թվականի գնումների պլանը հաստատելու մասին>> N 22 - որոշման հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ (հավելվածը կցվում է):

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. մարտի 10
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 Մարտի 2021 թվականի N 60

ՄԱՐՏԻ 8-Ի՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՄԻՇԱ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԵՐԵՄՅԱՆԻ ԿՆՈՋԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով ***որոշում եմ.***

1. Մարտի 8-ի՝ Կանանց տոնի կապակցությամբ համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1 <Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)> ծախսերի տնտեսագիտական 4729 <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածից Արցախյան առաջին պատերազմում զոհված Միշա Արամայիսի Երեմյանի կնոջը՝ Ռիտա Երեմյանին, տալ 25000 դրամ դրամական օգնություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին ապահովել ֆինանսավորումը:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության և մշակույթի հարցերով առաջատար մասնագետ Հ.Սիմոնյանի վրա:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

10.03.2021թ
Ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ № 61

11-ը մարտի 2021թ
Ք.Նոր Հաճն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Աննա Մուրադյան ԱԶ-ն դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Տոռոզյան 11/2 հասցեի տարածքում գտնվող 23ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն ստանալու խնդրանքով: Հաշվի առնելով, որ ըստ 7531 անդորրագրի դիմումատուն 2021 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի № 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Աննա Մուրադյան ԱԶ-ին* (վկայական 2821099535) ՆորՀաճն համայնքի Տոռոզյան 11/2 հասցեի տարածքում գտնվող 23ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություն 2021 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական,եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ.Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

11-ը մարտի 2021թ
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2021թվականի N 62

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12- Ի N 65 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2- րդ կետերի պահանջների **որոշում եմ.**

1.Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 12 - ի<< Նոր Հաճնի համայնքում աղետների ռիսկի կառավարման համակարգի ստեղծման մասին>> N 65 որոշման մեջ կատարել փոփոխություն.

ա) Որոշման հավելվածից հանել 2- րդ կետը :

բ) Խորհրդի քարտուղար <<Արարատ Դումանյան>> բառերը փոխարինել <<Արման Սմբատյան>> բառերով :

գ) Սույն փոփոխությունը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. Մարտ 15
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 Մարտի 2021 թվականի N 63

ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՎԱՀԱԳ ՅՈՒՐԱՅԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-հոդվածի 1- ին մասին 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի, 40- րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում զոհված ժամկետային զինծառայող Վահագ Յուրայի Աբրահամյանի հուղարկավորության ծախսերը հոգալու համար տրամադրել համայնքի բյուջեի գործառական դասակարգման 10.7.1 <Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4726 <Հուղարկավորության նպաստներ բյուջեից> հոդվածից 250000 դրամ և 01.06.1 <Հանրային ծառայություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4269 < Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածից 68000 դրամ:

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանին՝ ապահովել ֆինանսավորումը և կատարել վճարումը:

3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ա. Սմբատյանի վրա:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ